

ՊԱՐԱԿԱՆՈՆ ԳՐՎԱԾՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Բանալի բառեր – պարականոն ավետարաններ, գործքեր, տեսիլներ, վկայաբանություն, պատմություն, կանոն, հայ միջնադարյան մատենագրություն

Հայ գրավոր ավանդությունը մեզ է փոխանցել պարականոն հարուստ գրականություն, որը, սակայն, միակերպ ու միասեռ գրվածքների հավաքածու չէ: Հայերեն թարգմանված, վերափոխված և ի վերջո՝ հայերենով ստեղծված և մեզ հասած պարականոնները բազմազան ու բազմաբնույթ ստեղծագործություններ են, որոնց անհրաժեշտ է միմյանցից տարբերակել ոչ միայն ըստ ժանրերի՝ ավետարաններ, գործքեր, թղթեր և տեսիլներ, այլ նաև՝ ըստ դրանց բնույթի և կիրառական նշանակության, ինչպես նաև՝ ըստ Աստվածաշնչի կանոնական գրքերի և միմյանց հետ ունեցած փոխառնչությունների:

Սույն հոդվածում քննելու ենք հայերենով պահպանված նորկտակարանային պարականոնները: Հինկտակարանային պարականոնների առնչությամբ նշենք միայն, որ դրանց մի մասը հրատարակվել է 1896 թ.¹, որից հետո այս գրվածքների համապարփակ քննությունն իրականացրել է Բ. Սարգիսյանը², իսկ 1901 թ. դրանք թարգմանվել են անգլերեն³: Հինկտակարանային առանձին գրքերի ուսումնասիրությանն են նվիրված Ֆ. Կոնիբերի, Է. Պրոյշենի, Ա. Կարիերի, Բ. Բուրխարդի, Գ. Գալեմբարյանի, Ա. Մակլերի և այլոց աշխատությունները⁴: Այս գրությունների քննության ասպարեզում թերևս անկրկնելի է Երուսաղեմի եբրայական համալսարանի պրոֆեսոր, հայագետ Մ. Սթոունի աշխատանքը, որի գիտական երկարատև գործունեության ընթացքում ստեղծած արժեքավոր և անհաշվելի մենագրությունների ու հոդվածների գերակշիռ մասը նվիրված է ինչպես թարգմանված, այնպես էլ

¹ Թանգարան հայկական հին և նոր դպրոթեանց, հ. Ա, Անկանոն գիրք Հին Կտակարանաց, կազմ. **Յովսէփեանց Մ.** (այսուհետև՝ Անկանոն գիրք Հին Կտակարանաց), Վենետիկ, 1896:

² Տե՛ս **Սարգիսեան Բ.**, Ուսումնասիրութիւնք Հին Կտակարանի անվաւեր գրոց վրայ, Վենետիկ, 1898:

³ Տե՛ս The Uncanonical Writings of the Old Testament: Found in the Armenian Mss. of the Library of St. Lazarus, trans. by Issaverdens J., Venice, 1901:

⁴ Այդ մասին տե՛ս **Անասյան Հ.**, Հայկական մատենագիտություն, Ե-ՇԸ դդ., հ. Ա, Երևան, 1959, էջ 903-906, **Stone M.**, The Armenian Apocryphal Literature of the Old Testament in the Twentieth Century // Armenian Philology in the Modern Era From Manuscript to Digital Text, Leiden-& Boston, 2014, p. 257-263:

հայերենով գրված հինկտակարանային պարականոնների բնագրերի հրատարակությանն ու ուսումնասիրությանը¹:

Հայ միջնադարյան մատենագրության՝ մեզ ավանդած նորկտակարանային պարականոն հարուստ գրականությունն ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է հայտնվել միայն XIX դարում՝ նախևառաջ շնորհիվ հայագետ Մ. Էմինի: Ըստ արժանվույն գնահատելով այս գրվածքները՝ նա կազմել և 1863 թ. հրատարակել է պարականոնների բավական մեծածավալ ցանկը², դրանցից մի քանիսը լույս ընծայելով ռուսերեն թարգմանությամբ: Այս գրվածքներից թեև ոչ բոլորը կարող ենք *պարականոն* համարել (ինչպես օրինակ՝ «Պատմութիւն Ամոզոնայ, որք գնացին առ մեծն Աղեքսանդր», «Պատմութիւն Պղնձէ քաղաքի», «Պատմութիւն Փոնցիանոսի թագաւորին Հոռոմոց», «Բանք Նուշրեւան թագաւորին», «Տեսիլ Աթանասի Աղեքսանդրու հայրապետին», «Վկայաբանութիւն սրբոյն Սարգսի զօրավարին», «Վարք երանելոյն Մարիամու Եգիպտացոյն», «Պատմութիւն և վարք սրբոյն Ալեքսիանոսի ճգնաւորի մարդոյն Աստուծոյ» և այլն), սակայն այն առաջին փորձն էր՝ ի մի բերելու հայերենով պահպանված պարականոնները: Շուրջ հարյուր տարի անց պարականոն գրվածքների ցանկ է կազմել նաև հայագետ Հ. Անասյանը՝ դրանք տարանջատելով ըստ հին ու նորկտակարանային թեմաների³ և զուգակցելով ձեռագրական հարուստ նյութերի ու կատարված ուսումնասիրությունների ծանոթագրություններով⁴:

Ի տարբերություն արևմտյան գիտական շրջանակների, որտեղ պարականոնագիտությունը, որպես առանձին առարկա, իր կարևորագույն տեղն ունի սուրբգրային ուսումնասիրությունների շարքում, հայ իրականության մեջ պարականոններին շատ քիչ ուշադրություն է հատկացվել. դրանց հիմնականում անդրադարձել են Աստվածաշնչի կանոնի համատեքստում (Շ. արք. Աճեմյան, Մ. Տեր-Մովսիսյան, Վ. Ներսիսյան)⁵ և չեն դիտարկել իբրև հետազոտության արժանի առանձին բնագավառ: Ուստի XIX դարում դուրս գալով անհայտությունից՝ հայերեն պարականոնները քննության առարկա

¹ Մթոռնի հսկայածավալ մատենագիտությունը տե՛ս <http://www.apocryphalstone.c/bibliography/0> հղմամբ:

² Տե՛ս **Эмин Н. О.**, Список армянских апокрифов, составленный по каталогу рукописей Эчмиадзинской Библиотеки, изданному в 1863 году в Тифлисе // Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературе (за 1859-1882 гг.): апокрифы, жития, слова и др., М., 1897, с. 339-344:

³ Հինկտակարանային ու նորկտակարանային պարականոններն առաջին անգամ տարբերակել է պարականոնագիտության հիմնադիր Ջ. Ֆաբրիցիուսը՝ XVIII դարի սկզբին դրանք հրատարակելով առանձին ժողովածուներում: Տե՛ս **Fabricius J. A.**, Codicis pseudepigraphus Veteris Testamenti, 3 vol., Hamburg and Leipzig, 1713, Codicis apocryphi Novi Testamenti, 2 vol., Hamburg, 1719-1743: Պարականոնների այսպիսի տարանջատումը ընդունել են նաև հետագա բազմաթիվ ուսումնասիրողներ, այդ թվում նաև՝ Մխիթարյան հայրերը:

⁴ Տե՛ս **Անասյան Հ.**, նշվ. աշխ., էջ 898-914:

⁵ Տե՛ս **Աճեմյան արք. Շ.**, Մայր ցուցակ հայ Աստվածաշնչի ձեռագիրներու, Լիզպոն, 1992, էջ LXXXV-VII-СIII, **Тер-Мовсисян М.**, История перевода Библии на армянский язык, СПб., 1902, с. 199-259, **Nersessian V.**, The Bible in the Armenian Tradition, Los Angeles, 2001, p. 24-29:

են դարձել գլխավորապես Եվրոպայում:

Նորկտակարանային պարականոններից առաջինը հետազոտողների ուշադրության կենտրոնում է եղել «Առ Կորնթացիս Գ թուղթ»-ը, որը դեռևս 1715 թ. հրատարակվել է Ամստերդամում, իսկ 1736 թ. որպես հավելված կցվել Վիստոն եղբայրների՝ Լոնդոնում հրատարակած Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան»-ը¹: 1823 թ. «Առ Կորնթացիս Գ թղթի» բնագիրը գերմաներեն թարգմանությամբ հրատարակել է Վ. Ռինքը², որի քննությունը դրանից հետո ստանձնել է գերմանացի հետազոտող Պ. Ֆեթթերը³: Վերջինիս են պատկանում նաև «Թուղթ Դիոնեսիոսի Արիսպագացոյ առ Տիտոս վասն ննջման Մարեմայ»⁴ և «Տեսիլ առաքելոյն Պաղոսի, որ տարան հրեշտակքն զհոգի նորա»⁵ բնագրերի հրատարակությունն ու ուսումնասիրությունը: Նույն ժամանակահատվածում Հ. Գաթրճյանի քննությամբ լույս է տեսել նաև «Հանգիստ երանելոյն Յովհաննու առաքելոյն»⁶ երկը: Այս, ինչպես նաև մի շարք այլ պարականոններ ընդարձակ ծանոթագրություններով Մ. Էմինը հրատարակել էր դեռևս 1863 թ.⁷:

Սրբերի վարք-վկայաբանությունների շարքում պարականոն որոշ բնագրեր է հրատարակել նաև հայր Ալիշանը, թեև նա դրանք չի դիտարկել որպես պարականոն գրություններ: 1853 թ. լույս է տեսել «Վկայաբանութիւնք Թադէոսի առաքելոյն քարոզութեան և գալստեան ի Հայս և կատարման, որ ի Քրիստոսի», 1868 թ.՝ «Լաբուրնէայ դիւանագիր դպրի Եղեսոյ Թուղթ Աբգարու յեղեալ յասորոյն ի ձեռս Ս. Թարգմանչաց», իսկ որոշ ժամանակ անց տպագրվել են նաև «Պատմութիւն սրբոյն Թեկղի կուսի աշակերտի սուրբ առաքելոյն Պաղոսի», «Թուղթ Կորնթացոցն առ սուրբ առաքեալն Պողոսի», «Վկայաբանութիւն Պողոսի», «Վկայաբանութիւն Տիմոթէոսի առաքելոյն», «Վկայաբանութիւն Տիտոսի առաքելոյն» և «Վկայաբանութիւն Բարդողոմէոսի առաքելոյն» բնագրերը⁸:

¹ Տե՛ս Հայկական աշխատասիրութիւնք հայագետ Պ. Ֆեթթերի, թարգմ. և ծանօթ. Յ. Տաշեանի, Վիեննա, 1895, էջ 144:

² Տե՛ս **Rink W. F.**, Das Sendschreiben der Korinther an den Apostel Paulus und das dritte Sendschreiben Pauli an die Korinther, Heidelberg, 1823:

³ Տե՛ս Հայկական աշխատասիրութիւնք հայագետ Պ. Ֆեթթերի, էջ 142-147, 153-193: Տե՛ս նաև La correspondance apocryphe de saint Paul et des Corinthiens : ancienne version latine et traduction du texte arménien, par A. Carrière et S. Berger, Paris, 1891:

⁴ Տե՛ս **Vetter P.**, Die armenische dormitio Mariae // “Theologische Quartalschrift” 84, 1902, S. 321-349, Հայկական աշխատասիրութիւնք հայագետ Պ. Ֆեթթերի, էջ 11-17, **Սրուանձուեանց Գ.**, Հնոց եւ նորոց. պատմութիւն վասն Դաւթի եւ Մովսէսի Խորենացոյ, Կ. Պոլիս, 1874, էջ 110-115:

⁵ Տե՛ս **Vetter P.**, Die armenische Paulus-Apokalypse // “Theologische Quartalschrift” 88, 1906, S. 568-595:

⁶ Տե՛ս **Գաթրճեան վրդ. Հ.**, Հանգիստ երանելոյն Յովհաննու, ստուգեալ իբրև վաւերական, Վիեննա, 1877:

⁷ Տե՛ս **Эмин Н. О.**, նշվ. աշխ., էջ 1-31, 42-78, 109-149:

⁸ Տե՛ս **Ալիշան Ղ.**, Սոփերք Հայկականք 8, Վենետիկ, 1853, էջ 9-58, *նույնի՛* Լաբուրնէայ դիւանագիր դպրի Եղեսոյ Թուղթ Աբգարու յեղեալ յասորոյն ի ձեռս Ս. Թարգմանչաց, Վենետիկ,

Հայերեն նորկտակարանային պարականոնների հետազոտությունը մեծ թափ է ստացել հատկապես «Թանգարան հայկական հին ու նոր դպրոթեանց»-ի երկրորդ՝ «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց» (1898 թ.) և երրորդ՝ «Անկանոն գիրք Առաքելականք» (1904 թ.) հատորների՝ Վենետիկում լույս տեսնելուց հետո: Գիտնականների ուշադրության կենտրոնում են հայտնվել դրանցում ընդգրկված «Գիրք տղայութեան Քրիստոսի» («Մանկութեան անտարան»), «Յիշատակարանք Պիղատոսի»¹, որը համաշխարհային գրականության մեջ հայտնի է «Գործք Պիղատոսի» կամ «Նիկողիմոսի ավետարան» անվանումներով, «Երանելոյն Նիկողիմոսի ասացեալ յաղագս ննջման Մարիամու Աստուածածնի և միշտ կուսի», «Գործք Պետրոսի և Պաւղոսի առաքելոյ», «Վկայաբանութիւն Պետրոսի առաքելոյ»², «Վկայաբանութիւն Պաւղոսի սրբոյ առաքելոյն»³, «Վկայութիւն Անդրէի առաքելոյ, որ չարչարեցաւ ի պարտեզս յառաջ քան զկաղանդաց դեկտեմբերի»⁴, «Վկայաբանութիւն սուրբ առաքելոյն Փիլիպպոսի»⁵ և «Վկայաբանութիւն սրբոյ առաքելոյն Բարդուղոմէոսի» գրքերը⁶:

XX դարում շարունակվել և մինչ այժմ ուսումնասիրվում են Ղ. Ալիշանի և Պ. Ֆեթթերի ուշադրությանն արժանացած պարականոնները, որոնք, սակայն, տեղ չէին գտել վենետիկյան հրատարակություններում: Խոսքը մասնավորապես վերաբերում է «Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն

1868, *նույնի՝* Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատրնտիր քաղեալք ի ճառնտրաց, հ. Ա, Վենետիկ, 1874, էջ 513-531:

¹ Այս գրվածքի ուսումնասիրությամբ է զբաղվում Բ. Ուտիեն, տե՛ս **Outtier B.**, The Armenian and Georgian Versions of the Evangelium Nicodemi // “Apocrypha” 21, 2010, p. 49-56: Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ նա նաև պատրաստում է երկի քննական բնագիրը: Ավետարանի մասին տե՛ս նաև **Մամյան Մ.**, Նիկողիմոսի ավետարանը («Գործք Պիղատոսի») և դրա հայերեն թարգմանության առանձնահատկությունները // «ՊԲՀ», 2016, թիվ 3, էջ 39-57:

² Տե՛ս **Vetter P.**, Die armenischen apokryphen Apostelakten. II Die Akten der Apostel Petrus et Paulus // “Oriens Christianus” 3, 1903, S. 16-55, 324-383:

³ Արդի շրջանում հայերեն պարականոն գործքերի ու վկայաբանությունների ուսումնասիրությունը ստանձնել է Վ. Կալզոլարին: Տե՛ս **Calzolari V.**, La transmission des textes apocryphes chrétiens ou de l’« excès joyeux de la variance » : variantes, transformations et problèmes d’édition (L’exemple du Martyre de Paul arménien) // Poussières de christianisme et de judaïsme antiques. Études réunies en l’honneur de Jean-Daniel Kaestli et Eric Junod (Publications de l’Institut romand des sciences bibliques 5), éds A. Frey and R. Gounelle, Lausanne, 2007, p. 129-160:

⁴ Տե՛ս **Calzolari V.**, La version arménienne du Martyre d’André // The Apocryphal Acts of Andrew: Studies in Early Christian Apocrypha 5, éd. J. N. Bremmer, Louvain, 2000, p. 149-185:

⁵ Տե՛ս **Կալզոլարի Վ.**, Հայերեն քրիստոնեական անկանոն գրությունները եւ իրենց արժեքը իբր աղբիւր հայ հին քրիստոնեութեան պատմութեան վրայ (Ս. Փիլիպպոսի Վկայաբանութեան ենկրատական վարդապետութիւնը) // Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, Երևան, 2004, էջ 565-572:

⁶ Տե՛ս **Van Esbroek M.**, La naissance du culte de Saint Barthélémy en Arménie // « Revue des études arméniennes » (այսուհետև՝ « REArm »), XVII, 1983, p. 171-195, **Calzolari V.**, Les apôtres Thaddée et Barthélemy. Aux origines du christianisme arménien // “Apocryphes” 13, 2011:

քարոզութեանն եւ գալստեան ի Հայս եւ կատարմանն որ ի Քրիստոս»¹, «Առ Կորնթացիս Գ թուղթ»², «Պատմութիւն սրբոյն Թեկղի»³ պարականոններին:

Եթէ XIX դարում և XX դարասկզբին հրատարակված նորկտակարանային պարականոնները որոշ չափով ուսումնասիրված են (դեռևս հետազոտության կարոտ են Թովմա առաքյալին վերաբերվող պարականոնների շարքը, Մատթեոսի, Հակոբոս Տեառնեղբոր և Սիմոն Նախանձահույզի վկայաբանությունները), ապա նույնը չենք կարող ասել Հ. Անասյանի և հատկապես Ս. Էմինի կազմած ցանկերում տեղ գտած պարականոն բնագրերի մասին: Հ. Անասյանի կազմած ցանկի դեռևս չուսումնասիրված գրվածքներից են՝ «Պատմութիւն առաքելոյն Քրիստոսի Յակոբայ եւ Յովհաննու որդւոցն Որոտման», «Վկայաբանութիւն սրբոյ առաքելոյն Տիտոսի», «Պատմութիւն Յուդայի Սկարիովտացոյ»⁴ և «Կանայք հաւատացեալք, որք վկայեցան»⁵ պարականոնները:

Առանձնապես ուշագրավ են Ս. Էմինի կազմած ցանկում տեղ գտած նորկտակարանային պարականոն գրվածքները: Ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, Ս. Էմինն իր ցանկում ներառել է նաև այնպիսի գրվածքներ, որոնք որևէ առնչություն չունեն Աստվածաշնչի դեպքերի ու դեմքերի հետ, ուստի նրա կազմած ցանկից մենք այստեղ առանձնացրել ենք միայն այն գրությունները, որոնք որևէ կերպ առնչվում են սուրբգրային ավանդությանը: Այդպիսիք են՝ «Թուղթ Տեառն առաքեալ յերկնից ի Տաճարն Պետրոսի և Պօղոսի», «գԲան Յովհաննու վասն Նեոին և կատարածի աշխարհիս թերի», «գՈղբ Աստուածածնի», «Պատմութիւն և սքանչելագործութիւն Մարիամու Մագդաղենացոյն», «Պատմութիւն սքանչելի գործոց և վարդապետութեան սրբոյ առաքելոյ և աւետարանչին Յովհաննու, զորս արար յԵփեսոս և ի Պատմոս կղզւոջ», «Պատմութիւն վասն Յովհաննու ծննդեան և սննդեան և մկրտութեան», «Վասն աւետարանին Քրիստոսի, թէ ո՞րպէս գրեցաւ», «Պատմութիւն վասն սքանչելեաց հրեշտակապետին Միքայելի», «Պատմութիւն սրբոյ առաքելոյն Ղուկասու աւետարանչի», «Վկայաբանութիւն սրբոյ աւետարանչին Մարկոսի», «Գործք սրբոյն Կռտնելիոսի հարիւրապետի և

¹ Sté u **Van Esbroeck M.**, Le roi Sanatruk et l'apôtre Thaddée // « REArm », IX, 1972, p. 241-283 ; Calzolari V., Le Martyre de Thaddée arménien // Écrits apocryphes chrétiens, vol. 2, eds P. Geoltrain and J.-D. Kaestli (Bibliothèque de la Pléiade), Paris, 2005, p. 661-696 (introduction et traduction annotée du texte):

² Sté u **Hovhannessian V.**, Third Corinthians. Reclaiming Paul for Orthodoxy // “Studies in Biblical Literature”, 18, New York, Washington, D.D. Baltimore, 2000:

³ Sté u **Calzolari V.**, Un nouveau texte arménien sur Thècle : les Prodiges de Thècle (Présentation et analyse linguistique) // « REArm », XXVI, 1996-1997, p. 249-271, *նույնի՛* Սրբուհի Թեկղի աւանդութիւնը Հայաստանի մէջ // Հայաստանը և քրիստոնյա Արևելքը, Երևան, 2000, էջ 55-61:

⁴ Միջնադարյան այս հետաքրքրաշարժ պատմությանն է նվիրված մեր դեռևս անտիպ ուսումնասիրությունը, որ լույս կտեսնի առաջիկայում (տե՛ս **Hawk B., Mamyan M.**, The Life of Judas // More New Testament Apocrypha, ed. T. Burke and B. Landau, vol. 2, Michigan, 2018):

⁵ **Անասյան Հ.**, նշվ աշխ., էջ 906:

վկայութիւն նորին», «Պատմութիւն երկոտասան առաքելոցն Քրիստոսի և այլն և եօթանասուն երկու աշակերտաց»¹: Դրանց կարելի է ավելացնել նաև ՄՄ 8241 ձեռագրում (թ. 173 ա) տեղ գտած՝ «Պատմութիւն Քրիստոսի իւղին, որ եհեղ գլուխն Քրիստոսի ի տուն Սիմոնի Օհաննու» երկը:

Հայերենով պահպանված նորկտակարանային պարականոնների նման մեծ քանակը և բազմազանությունը ցույց են տալիս, որ դրանց հրատարակությանն ու ուսումնասիրությանը զուգահեռ՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև դրանց դասակարգման, ինչպես նաև կանոնական գրվածքների և միմյանց հետ ունեցած փոխառնչության խնդիրներին: Այս համատեքստում հարկ է անդրադառնալ նախ այն կարևոր հարցին, թե ի վերջո ո՞ր գրվածքներն են համարվում *պարականոն*:

Պարականոններին հնարավորինս ճշգրիտ սահմանում տալու փորձեր արվել են դեռևս XVI դարից ի վեր²՝ դրանց հրատարակությանը զուգահեռ, սակայն այս հարցին առավել մեծ ուշադրություն է դարձվել հատկապես XX դարում: Այս շրջանում է, որ գործածության մեջ է դրվել և բավական լայն ճանաչում ստացել բողոքական աստվածաբան և աստվածաշնչագետ Վ. Շնիմելիսերի տեսությունը, ըստ որի՝ նորկտակարանային պարականոնների շարքին են դասվում այն գրվածքները, որոնք ստեղծվել են նմանակելու, լրացնելու, ճշգրտելու կանոնում ընդգրկված գրքերը կամ մրցակցելու դրանց հետ: Պարականոնները, ձևով նման լինելով նորկտակարանային գրքերին, հավակնել են ձեռք բերել դրանց հավասար կարգավիճակ, սակայն, ի վերջո, դուրս են մնացել կանոնից: Ըստ այդմ *պարականոն* կարելի է համարել միայն այն գրվածքները, որոնք ստեղծվել են մինչև կանոնի վերջնական ձևավորումը (IV դար)³: Հետագա դարերում գրված նմանատիպ երկերը պատկանում են *վարքագրական* ժանրին, որոնք, սակայն, պարականոնների ուսումնասիրության տեսանկյունից շատ արժեքավոր են, քանի որ ներկայացնում են հնագույն, հաճախ նաև՝ կորած ավանդությունների վերապատումներ⁴:

¹ Մ. Էմինի ցանկը կազմված է ըստ Էջմիածնի ձեռագրացուցակի: Տե՛ս **Կարենեանց Հ.**, Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի սրբոյ աթոռոյն Էջմիածնի, 1863, Թիֆլիս:

² 1563 թ. Մայրը Նեանդերը հրատարակել է պարականոն որոշ բնագրեր և տվել դրանց սահմանումը: Այդ մասին տե՛ս **Giles D.**, *The Uncanonical Gospels and Other Writings, Referring to the First Ages of Christianity in the Original Languages*, London, 1852, p. VIII:

³ Թեև այս տեսությունն առավել հայտնի է Վ. Շնիմելիսերի անունով, նա, սակայն, առաջինը չէր, որ պարականոնների առանձնահատկությունների շարքում կարևորել է ժամանակի գործոնը (տե՛ս օրինակ **Hone W.**, *The Apocryphal New Testament*, London, 1820, p. IV): Ուշագրավ է նաև այն, որ որոշ հետազոտողներ, ինչպես օրինակ Հ. Կուպերը, ընդհակառակը, պարականոններին բնորոշ հատկանիշների շարքում շեշտել են դրանց ուշ ծագումը (տե՛ս **Cowper H.**, *The Apocryphal Gospels and Other Documents Relating to the History of Christ*, London-Edinburgh, 1867, p. IX):

⁴ Տե՛ս **Schneemelcher W.**, *New Testament Apocrypha, Gospels and Related Writings*, London-Louisville, 1991, p. 58-59: Վերախմբագրելով ու բազմաթիվ հավելումներով հարստացնելով Է. Հեննեկեի՝ ավելի վաղ կատարած ուսումնասիրությունը (տե՛ս **Hennecke E.**, *Neutestamentliche Apokryphen*, Bd.

Շնիմելխերյան այս տեսակետը, այնուամենայնիվ, վիճարկել են որոշ ուսումնասիրողներ, որոնց թվում վճռորոշ է AELAC¹-ի համահիմնադիր, աստվածաշնչագետ Է. Շյունտյի կարծիքը: Չհամաձայնելով Վ. Շնիմելխերի տեսությանը՝ նա դրա նկատմամբ իր ժխտական վերաբերմունքը ներկայացնել է երեք հիմնական կետերով².

ա) ժամանակագրական սահմանափակումը խնդրահարույց է, և պարականոնների բացահայտման հարցում այն կարող է սխալ ուղեցույց լինել. գրվածքը չի կարելի պարականոն համարել միայն այն պատճառով, որ գրվել է մինչև IV դարը, բ) այն կարծիքը, որ պարականոնները հավակնել են ունենալ կանոնականներին հավասար կարգավիճակ, կարող է վերաբերել միայն սակավաթիվ գրվածքների, գ) պարականոնների ու կանոնական գրվածքների և հատկապես դրանց վերնագրերի նմանությունը չի կարող բնութագրման ճշգրիտ ուղենիշ լինել, քանի որ պարականոնների գրական ժանրն էականորեն տարբերվում է կանոնականներից³:

Առաջարկելով «նորկտակարանային պարականոններ» անվանումը փոխարինել «հնագույն քրիստոնեական պարականոններ» (*Apocryphes chrétiens anciens*) եզրույթով⁴, ինչը թույլ կտար այս խմբում ներառել նաև հինկտակարանային ավանդության հիման վրա ստեղծված քրիստոնեական գրվածքները, Է. Շյունտն առաջ է քաշել դրանք բնութագրող սեփական սահմանումը՝

2, Tübingen, J. C. B. Mohr 1924)՝ 1959-1999 թթ. Վ. Շնիմելխերն այն վերահրատարակել է վեց անգամ (տե՛ս **Schneemelcher W.**, Neutestamentlichen Apokryphen in deutscher Übersetzung, Tübingen, 1959-1999): Հետագայում այս ուսումնասիրությունը թարգմանվել է անգլերեն և լույս տեսել 1963 և 1965 թթ., ապա վերահրատարակվել 1991 և 1992 թթ. (տե՛ս New Testament Apocrypha, vol. 1: Gospels and Related Writings, vol. 1, 1991, New Testament Apocrypha, Writings Relating to the Apostles Apocalypses and Related Subjects, vol. 2, 1992): Մեր մեջբերումներն արվել են ըստ անգլերեն 1991 թ. հրատարակության:

¹ Պարականոնների հետազոտության բնագավառում իր անփոխարինելի ներդրումն ունի 1981 թ. ժնկում հիմնադրված AELAC-ը (*Association pour l'étude de la littérature apocryphe chrétienne, նախագահ՝ Վ. Կալցոլարի*)՝ Քրիստոնեական պարականոն գրականության ուսումնասիրության ֆրանս-շվեյցարական ասոցիացիան, ինչպես նաև՝ 2014 թ. Յորքում ստեղծված Քրիստոնեական պարականոն գրականության հետազոտությունների հյուսիսամերիկյան ասոցիացիան՝ NASSCAL-ը (*The North American Society for the Study of Christian Apocryphal Literature, նախագահ՝ S. Բլրք*):

² Պարականոնների սահմանման ու անվանման շուրջ Վ. Շնիմելխերի և Է. Շյունտյի բանավեճերի մասին մանրամասն տե՛ս **Calzolari V.**, The Editing of Christian Apocrypha in Armenia: Should we turn a new leaf? // “Armenian Philology in the Modern Era From Manuscript to Digital Text”, p. 267-269:

³ Տե՛ս **Junod É.**, Apocryphes du Nouveau Testament ou apocryphes chrétiens anciens ? Remarques sur la désignation d'un Corpus et indications bibliographiques sur les instruments de travail récents // « Études Théologiques et Religieuses » 58, 1983, p. 410-411: Դեռևս մեկ դար առաջ որոշ ուսումնասիրողներ կանոնական-պարականոն գրվածքների գուգակցությունն այնքան անհեթեթ են համարել, որ դրանք համեմատել են մարդ-ավանակ գուգակցման հետ: Տե՛ս, օրինակ, **Stowe C.**, Origin and History of the Bible, Both the Canonical and Apocryphal, Hartford, 1868, p. 203:

⁴ Տե՛ս **Junod É.**, Apocryphes du Nouveau Testament : une appellation erronée et une collection artificielle // “Apocrypha” 3, 1992, p. 26: Այս անվանումն ընդունել են նաև AELAC-ի անդամները:

առանց ժամանակագրական սահմանափակման: Ըստ այս ձևակերպման՝ պարականոնները քրիստոնեական ծագում ունեցող անանուն կամ կեղծ գրություններն են, որոնք առնչվում են Հին և Նոր Կտակարանների գրքերին, քանի որ՝ ա) վերաբերում են այն իրադարձություններին, որոնք ներկայացվում են կամ որոնց մասին կան հիշատակումներ Կտակարաններում, բ) վերաբերում են Կտակարաններում հանդիպող իրադարձությունների շարունակությանը, գ) կենտրոնանում են դրանցում հանդես եկող կերպարների վրա, դ) նման են Սուրբ Գրքի գրական ժանրին¹:

Է. Ժյունոյի վերոնշյալ ձևակերպումը մեծ ընդունելություն է գտել նրա ժամանակակից գործընկերների և հետագա ուսումնասիրողների կողմից և՛ պարականոնների բնորոշման համար դառնալով ամենից ընդունելի տարբերակը²: Դեռևս 1959 թ. նման մի ձևակերպում էր առաջ քաշել Հ. Անասյանը. «Մատենագրութեան պատմութեան մեջ անկանոն կամ անվաւերական են անուանուում այն գրուածքները, որոնք ընդհանուր առմամբ Աստուածաշնչի այսպէս կոչուած կանոնական (նախականոն եւ երկրորդականոն) գրքերի շարքից դուրս են մնում, այլ խօսքով՝ Հին եւ Նոր Կտակարանների կազմի կանոնականութեան վերաբերմամբ պարականոն եւ տարականոն հանդիսացող գրուածքներն են: Նրանք կրօնական ասանդութիւններ ներկայացնող, մեծ մասամբ վիպական եւ երբեմն հազիւ թէ պատմական կորիզ պարունակող գրութիւններ են, որոնց նիւթերը կապուած են Աստուածաշնչի դէպքերի ու դէմքերի հետ, կամ այնտեղից են բխում, եւ որոնք Աստուածաշնչի կանոնական գրքերի նմանողութեամբ են խմբագրուած»³:

Պարականոն բոլոր գրվածքները մեկ ընդհանուր ձևաչափում ամփոփելու այս ձգտումը թերևս բխում է դրանց՝ մեկ ընդհանուր անվանումից: Համաշխարհային գրականության մեջ պարականոն գրվածքների համար դասական է դարձել հունարեն *ἀπόκρυφος* («գաղտնի», «ծածուկ», «խորհրդավոր») բառի կիրառումը: Վաղքրիստոնեական շրջանից եկող այս եզրույթը

¹ Sté u **Junod É.**, Apocryphes du Nouveau Testament ou apocryphes chrétiens anciens ? Remarques sur la désignation d'un Corpus et indications bibliographiques sur les instruments de travail récents, p. 412: Է. Ժյունոյի վերոնշյալ քննադատական մոտեցումը Վ. Շնիմելչերին հետագայում դրդել է իր գրքի նոր՝ հինգերորդ հրատարակությունում (1987 թ.) որոշ փոփոխություններ անել իր ձևակերպման մեջ՝ այնուհանդերձ չիրաժարվելով պարականոնների ստեղծման ժամանակային սահմանափակումից. «Նորկտակարանային պարականոններն այն գրվածքներն են, որոնք ստեղծվել են եկեղեցու առաջին դարերում և որոշակի՝ վերնագրային, ժանրային և բովանդակային ընդհանրություններ ունեն նորկտակարանային գրքերի հետ: Վերջիններին հետ պարականոնները տարբեր փոխառնչություններ ունեն, որոնք պետք է որոշվեն ըստ տվյալ պարականոնի առանձնահատկության»: Sté u **Schneemelcher W.**, New Testament Apocrypha, p. 60:

² Պարականոնների բնորոշման մասին ուշագրավ դիտարկումներ ունի նաև Ժ. Մ. Ռոսսլին, տե՛ս **Roessli J.-M.**, North American Contributions to Current Issues in the Field: Defining Apocrypha // Forbidden Texts on the Western Frontier, ed. Burke T. and Landau B., Eugene, 2015, p. 34-47:

³ **Անասյան Հ.**, նշվ. աշխ., էջ 898-899:

նախ գործածվել է իր ուղիղ՝ «ծածուկ» կամ «գաղտնի» իմաստով, որով ի սկզբանե բնորոշվել են գնոստիկյանների գրվածքները¹: *Ἀπόκρυφος* են անվանվել նաև կանոնից դուրս մնացած, ինչպես նաև՝ հրեական կանոնում (նախականոն) չընդգրկված երկրորդականոն գրքերը²: Բացի այդ, այս եզրույթը գործածվել է մի քանի իմաստներով. այսպես օրինակ՝ II դարի քրիստոնյա ջատագով Տերտուլիանոսն իր «Մարմնի հարության մասին» երկում *apocryphus* գրվածքները նույնացրել է *պիղծ հորինվածքներին* (*blasphemiae fabulas*)³, իսկ Իրինեոս Լուգդունացին իր «Ընդդեմ հերձուածոց» աշխատության մեջ *ճշմարիտ* և *ուսանելի գրքերին* (*τὰ τῆ? ἀληθείας μὴ ἐπισταμένον γράμματα*) հակադրել է *պարականոն* և *կեղծ գրքերը* (*πληθὸς ἀποκρύφων καὶ νόθων γραφῶν*)⁴: Այս բառն այլ իմաստով է կիրառել Որոզինեսը՝ *ἀπόκρυφος* համարելով կանոնից դուրս մնացած գրքերը, որոնք, սակայն, վնասակար չեն, այլ՝ «ծածուկ», այսինքն՝ ոչ հրապարակելի⁵:

Հետաքրքրական է, որ IV դ. հեղինակ Եվսեբիոս Կեսարացին, որն իր «Եկեղեցական պատմութեան» երկում նույնպես անդրադարձել է պարականոն գրքերին, դրանց համար երբևէ չի կիրառել *ἀπόκρυφος* եզրույթը՝ փոխարենը գործածելով *νότοις-կեղծ, անհարազատ, ἀντιλεγόμενων*-հակասական, *ἀνωμολογημένας*-մերժելի և *οὐκ ἐνδιαθήκουσ-* ոչ ի Կտակո՞ւ: Այս աշխատության հայերեն փոխադրության մեջ գործածվել են **անհարազատ, մերժեալք և կասկածառոքք** անվանաները⁷:

Թեև պարականոն գրվածքների համար *ἀπόκρυφος* եզրույթն ամենից ընդունված տարբերակն է, այնուամենայնիվ XIX-XX դարերի որոշ ուսումնասիրողներ գործածել են այլընտրանքային անվանումներ, ինչպես օրինակ՝

¹ Հովհաննես առաքյալին վերագրվող գնոստիկյան պարականոն գրվածքներից մեկը հենց այդպես է կոչվում՝ “τὸ ἀπόκρυφον τοῦ Ἰωάννου” կամ “τὰ κατὰ Ἰωάννην ἀπόκρυφα” (տե՛ս **Хорошев А. Л.**, Другое благовестие “Евангелие Иуды”. Исследование, перевод и комментарий, СПб., 2014, с. 19): Ժամանակակից պարականոնագիտության մեջ, սակայն, գնոստիկյան տեքստերի ու պարականոն գրվածքների միջև տարբերակում դնելու միտում է նկատվում: Այս մասին մանրամասն տե՛ս **Burke T.**, Introduction: The 2013 Symposium // *Forbidden Texts on the Western Frontier*, p. 13:

² **Charles R. H.**, *The Apocrypha and Pseudepigrapha of the Old Testament: Apocrypha*, vol. 1, Oxford, 1913, p. VII-IX. Ներկայումս բողոքականները *ἀπόκρυφος* են համարում կանոնում չընդգրկված բոլոր, այդ թվում նաև՝ երկրորդականոն գրքերը:

³ Quinti Septimii Florentis Tertulliani Liber de resurrectione carnis, by Lindner G. B., Lipsiae, 1857, p. 80.

⁴ Sancti Irenaei episcopi Lugdunensis Libros quinque adversus haereses, t. I, by Harvay W., Cambridge, 1857, p. 177.

⁵ “Αποκρυφοί” բառի նշանակության և դրա բազմիմաստ գործածության մասին տե՛ս **Schneemelcher W.**, *New Testament Apocrypha*, p. 14-15:

⁶ Երկի հունարեն բնագրի համապատասխան հատվածը թարգմանել ու պարզաբանել է Է. Շիրինյանը: Հունարեն ամբողջական տեքստն առցանց հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=3.25&fromdoc=Perseus%3Atext%3A2008.01.0640>):

⁷ Տե՛ս Եւսեբիոսի Կեսարացոյ Պատմութիւն Եկեղեցոյ յեղեալ յԱստրոյն ի Հայ ի հինգերորդ դարու, պարզաբանեալ նոր թարգմանութեամբ ի Յոյն բնագրէն ի ձեռն Հ. Աբրահամ Վ. Ճարեան, Վենետիկ, 1874, էջ 199-200:

«Արտականոնական»¹, «Կորած»², «Արգելված»³, «Այլ»⁴, «Անձանոթ կամ տարօրինակ»⁵, և այլն: Իսկ արդի հետազոտող Վ. Ռորդորֆն առաջարկել է առհասարակ հրաժարվել *ἀπόκρυφος* եզրույթի կիրառումից և փոխարինել այն *անանուն և կեղծ գրություններ, արտասուրբգրային քրիստոնեական գրականություն անվանումով*: Այդ անվանումները, սակայն, զանգվածային ընդունելություն չեն գտել:

Ի տարբերություն վաղքրիստոնեական շրջանի՝ ներկայումս *ἀπόκρυφος* եզրույթը կորցրել է իր նախնական նշանակությունը և ձեռք է բերել առարկայական բնույթ ու գաղափարական նշանակություն⁷:

Ինչ վերաբերում է հայ իրականությանը, ապա կարևոր է նշել, որ հայ գրավոր ավանդության մեջ թե՛ անցյալում և թե՛ այժմ պարականոն գրվածքների համար երբևէ չի գործածվել *ἀπόκρυφος* եզրույթը: Հայ միջավայրում հունարեն այս բառը թարգմանվել և կիրառվել է իր մի քանի՝ «անկանոն», «ծածուկ», «գաղտնի», «սուտ», «արգելված» իմաստներով⁸: Սկսած XIX դարից, հայ պարականոն գրականության ուսումնասիրությանը զուգահեռ, կիրառելի են դարձել դրանց մի շարք այլ անվանումներ ևս, ինչպես օրինակ՝ *անհարազատ, ոչ վավերական* կամ *անվավեր* գրվածքներ: Հարկ է նշել, սակայն, որ հայ գրավոր ժառանգության մեջ *ἀπόκρυφος* եզրույթի բացակայությունը պայմանավորված չէ դրա օտար ծագմամբ. ներկայումս խնդրո առարկա երկերի համար գործածական է մեկ այլ հունարեն բառ՝ *պարականոն* (*παρά κανών*), որը թարգմանաբար նշանակում է «կանոնից դուրս»⁹: Թեև իմաստային առումով այս երկու բառերը (*ἀπόκρυφος* և *παρά κανών*) միմյանցից շատ տարբեր են, այնուամենայնիվ *պարականոնը* հայերենում դարձել է

¹ Տե՛ս **Pick B.**, *The Extracanonical Life of Christ, Being a "Record of the Acts and Sayings of Jesus of Nazareth Drawn From Uninspired Sources"*, London, 1903:

² Տե՛ս **Platt R. H.**, *The Lost Books of the Bible and the Forgotten Books of Eden*, with Frank Dr., 1926 կամ **Ermann B.**, *Lost Scriptures: Books that Did Not Make It into the New Testament*, Oxford, 2005:

³ Տե՛ս **Wake W.**, *The Forbidden Books of the Original New Testament of Jesus Christ*, 1863:

⁴ Տե՛ս **Cameron R.**, *The Other Gospels: Non-canonical Gospel Texts*, Louisville, 1982:

⁵ **Beskow P.**, *Strange Tales about Jesus: A Survey of Unfamiliar Gospels*, Philadelphia, 1983:

⁶ Տե՛ս **Rordorf W. N.**, *Terra Incognita. Recent Research on Christian Apocryphal Literature, especially on some Acts of Apostles* // *"Biblica Et Apocrypha, Orientalia, Ascetica"*, ed. by Livingstone E. A., vol. XVIII, Leuven, 1993, p. 144-146:

⁷ Տե՛ս **Calzolari V.**, *The Editing of Christian Apocrypha in Armenian: Should we turn a new leaf*, p. 265:

⁸ Տե՛ս **Շիրինյան Է.**, «Գիտություն գրոց»-ը միջնադարյան Հայաստանում («անկանոն, արտաքին եւ նուրբ գրեանք») // *Տարեգիրք Աստվածաբանության ֆակուլտետի*, Երևան, 2015, էջ 33:

⁹ Ուշագրավ է, որ, ինչպես նշում է Է. Շիրինյանը, այս հունարեն բառակապակցությունը (*para; kanwn*) չի երբևէ չի կիրառվել հունարենում անկանոն կամ անվավեր գրվածքները սահմանելու համար, այլ պարզապես օգտագործվել է տարբեր երևույթների՝ իր ուղիղ՝ «կանոնից դուրս» իմաստով և նույնությամբ էլ փոխանցվել է հայերեն, մասնավորապես հունարեն թարգմանություններում: Տե՛ս **Շիրինյան Է.**, նշվ. աշխ., էջ 34:

aJpovkrufo" բառի համարժեքը, և ինչպես վերջինը, ձեռք է բերել մի քանի իմաստներ:

Ընդունելով *պարականոն* եզրույթի գործածությունը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն կարևոր հանգամանքը, որ Մխիթարյան հայրերի հրատարակած, ինչպես նաև՝ Մ. Էմինի և Հ. Անասյանի ցանկերում տեղ գտած գրվածքներն էականորեն տարբերվում են միմյանցից: Մեզ հասած պարականոնների բազմազանությունը ցույց է տալիս, որ դրանք բոլորը միևնույն կաղապարի մեջ զետեղելը գրեթե անհնար է. այն դեպքում, երբ Վ. Շնիմելխերի տեսությունն ամբողջովին համապատասխանում է որոշ պարականոնների բնույթին, մյուսների պարագայում այն լիովին անընդունելի է: Մյուս կողմից, ընդունելով Է. Ժյունոյի տեսակետը, որը հետագա դարերում ստեղծված գրվածքներին նույնպես հնարավորություն է ընձեռում *պարականոն* համարվելու, մենք հավակնում ենք պարականոնների շարքին դասել միջնադարում ստեղծված գրականության զգալի մասը, որն այս կամ այն կերպ առնչվում է Աստվածաշնչին:

Ելնելով մեզ հասած հայերեն նորկտակարանային պարականոնների տարասեռ բնույթից՝ անհրաժեշտ է դրանք տարբերակել միմյանցից: Հակառակ դեպքում ստիպված կլինենք միևնույն հարթության վրա զետեղել այլատեսակ գրվածքներ՝ նկատի ունենալով միայն դրանց՝ սուրբգրային դեմքերին ու դեպքերին այս կամ այն կերպ առնչվելը և Աստվածաշնչի կանոնի մաս չկազմելը: Այս պարագայում եկեղեցու կողմից մերժված և արգելված գրությունները կնույնացվեն հայերեն բազմաթիվ ձեռագրերում Աստվածաշնչի գրքերի հետ ընդօրինակված երկերին, սրանք իրենց հերթին կնույնանան երբևէ Սուրբ գրքերի ցանկերում չընդգրկված, սակայն եկեղեցական ավանդության մի մասը դարձած գրվածքներին, իսկ վերջիններս՝ սուրբգրային թեմաներով գրված միջնադարյան ստեղծագործություններին, որոնք, սակայն, պարականոն համարվել չեն կարող:

Հիմք ընդունելով Մխիթարյան հայրերի (Ղ. Ալիշան, Ե. Տայեցի, Ք. Զրաքյան) հրատարակած և ամենից շատ ուսումնասիրված նորկտակարանային պարականոն գրվածքները՝ ավետարաններ, գործքեր, թղթեր, տեսիլներ, և դրանց ավելացնելով Հ. Անասյանի և Մ. Էմինի ցանկերում տեղ գտած որոշ գրքեր՝ դրանք առանձնացնենք ըստ հետևյալ խմբերի.

- Պարականոններ, որոնք հավակնել են դառնալ Աստվածաշնչի կանոնի մաս՝ «Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի»-ն¹

¹ Գրիգոր Տաթևացին այս գիրքը ներառել է Աստվածաշնչի գրքերի իր կազմած ցանկում: Տե՛ս Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 450: Աստուածաշնչի գրքերի ցանկերում այն մշտապես հաջորդում է Հովհանու հայտնությանը: Մտել է Ճաշոց ու Մաշտոց, ընթերցվում է եկեղեցական քահանայաթաղի արարողությունների վերջում «խնդրեսցուք» քարոզից հետո. «Եւ քարոզէ. «Վասն գտանելոյ: Եւ զկնի ընթեռնու զաղալթս եւ զՀանգիստն երանելոյն տեառն Յոհաննու եւ աւետարանչի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (տե՛ս Մայր Մաշտոց. հ. Ա, Ժ դար, աշխատ.՝ Գ.

և «Առ Կորնթացիս Գ թուղթ»-ը¹: Սրանք, ինչպես նաև՝ «Աղերս Ելթաղի»-ն² հայերեն ձեռագրերում շատ հաճախ ընդօրինակվել են Աստվածաշնչի գրքերի հետ միասին և տեղ են գտել Հ. Ջոհրայանի և Ա. Բագրատունու հրատարակած Սուրբ Գրքի հավելվածում³: Աստվածաշնչի ձեռագրերում շատ հաճախ հանդիպում ենք նաև «Նաւարկութիւն Պաւղոսի առաքելոյ ի Հռոմ» երկին, որ Պողոս առաքյալին առնչվող պարականոն գրվածքների շարքում հրատարակել է Ք. Չրաքյանը:

- Պարականոններ, որոնց տրված միջնադարյան բնորոշումը ամենից շատ է համապատասխանում *ἀπόκρυφος* բառի նախնական՝ «ծածուկ» կամ «գաղտնի» իմաստին: Միջնադարում դրանք մաս են կազմել տարբեր ժամանակներում կազմված «սուտ», «հերձվածողական» կամ «ծածուկ» երկերի ցանկերի: Նման գրվածքներից մեզ են հասել երեքը՝ «Մանկութեան աւետարան»-ը, «Աստուածածնի տեսիլն»-ը⁴ և «Պաւղոսի տեսիլն»-ը⁵:
- Պարականոնների հաջորդ խումբը ներառում է այնպիսի գրվածքներ, որոնք երբևէ չեն հավակնել դառնալու և չեն դարձել Աստվածաշնչի

Տեր-Վարդանեանի, Էջմիածին, 2012, էջ 486): Հայտնի է նաև այս պարականոնի մեկնությունը, որ գրել է Ներսես Լամբրոնացին XII դարում (երկի բնագիրն անգլերեն թարգմանությամբ և ընդարձակ ծանոթագրությամբ տե՛ս **Thomson R. W.**, *Nersēs of Lambron: Commentary on the Dormition of Saint John*, vol. 1, Leiden-Boston, 2017):

¹ Այս գրությունը, որ մաս է կազմում Պողոսի Գործք-ի, ներառում է Կորնթացի հոգևորականների՝ Պողոս առաքյալի երկրորդ թղթի համառոտ պատասխանը և վերջինիս երրորդ թուղթը կորնթացիներին: Հունարենից թարգմանվելով հայերեն և ասորերեն՝ այն մաս է կազմել այս ժողովուրդների եկեղեցիների ընդունած գրքերի (այս մասին մանրամասն տե՛ս Հայկական աշխատասիրությունք հայագետ Պ. Ֆեթթերի, էջ 142-193): Ընդգրկվել է Գրիգոր Տաթևացու կազմած ցանկում (տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 451): Հայտնի է նաև Եփրեմ Ասորու՝ այս թղթի մեկնությունը (տե՛ս Սրբոյն Եփրեմի մատենագրությունք, հ. Գ, «Մեկնություն Չորեքտասան թղթոցն Պաւղոսի», Վենետիկ, 1836, էջ 116-123): Այս մեկնության ուսումնասիրությունը տե՛ս **Յան Թ.**, Պաւղոսի եւ Կորնթացոց եւ Մեկնութիւն Եփրեմի // «Հանդէս ամսօրեայ», 1891, Յուլիս, էջ 218:

² Հ. Անայանը «Աղերս Ելթաղի»-ն ներառել է իր կազմած նորկտակարանային պարականոնների ցանկում, տե՛ս **Անայան Հ.**, նշվ. աշխ., էջ 904: Այս կարճ գրությունը շատ մեծ համբավ է ունեցել միջնադարում, Աստվածաշնչի ձեռագրերում հաջորդել է Կաթողիկե թղթերին: Մտել է ճաշոց և ընթերցվում է Հոգեգալուստի օրը՝ Հուդայի թղթից հետո (այս մասին տե՛ս **Սեբուլա Օ.**, Նոր Կտակարանի գրքերու կարգը Հայոց մեջ, Վիեննա, 1949, էջ 84-85):

³ Աստուածաշունչ Մատենան Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1805 և Գիրք Աստուածաշունչը Հին եւ Նոր կտակարանաց, Վենետիկ, 1860:

⁴ Տե՛ս Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, էջ 440-451: Մեզ է հասել այս պարականոնի մեկնությունը (տե՛ս «Մեկնութիւն տեսլեանն Մարիամու» ըստ ՄՄ 740 (29ա-37ա, 1696 թ), աշխատ.՝ Թ. Տասնապետյանի, Անթիլիաս, 1997, էջ 3-15):

⁵ Անկանոն գիրք Առաքելականք, էջ 62-110: Երկի ուսումնասիրությունը տե՛ս **Vetter P.**, *Die armenische Paulus-Apokalypse // Theologische Quartalschrift* 89, 1907, S. 58-75; **Leloir L.**, *L'Apocalypse de Paul selon sa teneur arménienne // «REArm»*, XIV, 1980, p. 217-280:

կանոնի մաս, սակայն չեն մերժվել և ընդունվել ու դարձել են եկեղեցական ծիսակատարությունների համար կիրառելի գրքեր՝ «Հակոբուսի նախաավետարան»-ը, «Յիշատակարանք Պիղատոսի»-ն («Գործք Պիղատոսի» կամ «Նիկողիմոսի ավետարան»), «Ննջումն Մարիամու Աստուածածնի եւ միշտ կուսին»։ Այս պարականոնները մի տեսակ միջանկյալ տեղ են զբաղեցնում սուրբգրային և եկեղեցական ավանդությունների միջև¹։

- Պարականոններ, որոնք ունեն ազգային պատմագիտական արժեք։ Վերաբերում են Հայաստանում քրիստոնեությունն արմատավորած Թադեոս և Բարդուղեմիոս առաքյալներին՝ «Թուղթ Աբգարու թագաւորի Հայոց եւ քարոզութիւնք սրբոյն Թադէի առաքելոյ» և «Վկայաբանութիւն Բարդուղեմիոսին»։ Ասորական «Վարդապետութիւն Ադդէի» երկի հիման վրա գրված, սակայն վերաիմաստավորված և տեղական ավանդության մի մասը դարձած «Վկայաբանութիւն Թադէի»-ն, ինչպէս նաև՝ հայկական ինքնուրույն հողի վրա ստեղծված «Վկայաբանութիւն Բարդուղեմիոսին»² ոչ միայն լրացնում ու շարունակում են սուրբգրային ավանդությունը, այլև շեշտելով հայ եկեղեցու առաքելական ծագումը՝ ձևավորում են Հայաստանում քրիստոնեության արմատավորման ավանդությունը՝ կարևոր աղբյուր հանդիսանալով հայ հին քրիստոնեության պատմության համար³։
- Պարականոն գրվածքներ, որոնք հեշտությամբ կարող են վերագրվել վարքագրական ժանրին։ Խոսքը մասնավորապես վերաբերում է առաքյալների պարականոն գործքերին և դրանց մի մասը կազմող վկայաբանություններին։ Ժամանակին անջատվելով պարականոն գործքերից՝ առաքյալների վկայաբանությունները գործածվել են եկեղեցական ծիսակատարությունների ժամանակ՝ ընթերցվելով առաքյալների հիշատակությունների տոներին։ Առաքյալներին առնչվող պարականոն այսպիսի գրվածքների շատ հաճախ հանդիպում ենք հայերեն ճառընտիրներում՝ թաքնված *վարքերի, վկայաբանություն-*

¹ Տե՛ս **Shoemaker St. J.**, Apocrypha and Liturgy in the Fourth Century // Jewish and Christian Scriptures, the Function of “Canonical” and “Non Canonical” Religious Texts, ed. by J. H. Charksworth, L. M. MacDonald, London, 2010, p. 154-155:

² Տե՛ս **Van Esbroek M.**, La naissance du culte de Saint Barthélémy en Arménie, p. 171-195:

³ Այս մասին տե՛ս **Calzolari V.**, Réécriture des textes apocryphes en arménien : l'exemple de la légende de l'apostolat de Thaddée en Arménie // “Apocrypha” 8, 1997, p. 91-110 ; *նույնի՛* En guise d'introduction : quelques réflexions sur le rôle de la littérature apocryphe dans l'Arménie chrétienne ancienne // Apocryphes arméniens : transmission, traduction, création, iconographie. Actes du colloque international sur la littérature apocryphe en langue arménienne, Genève, 18-20 septembre 1997, Lausanne, 1999, p. 10-17: Տե՛ս նաև *նույնի՛*՝ Պատմութիւն սրբոյն Թեկղի եւ Վկայաբանութիւն Ս. Թադէոսի եւ Մանդիստոյ կուսին. համեմատութիւն եւ բնագրական նկատողութիւններ // «Բանբեր Մատենադարանի», հ. 21, 2014, էջ 66:

ների կամ պարզապես՝ սրբերի պատմությունների անվան տակ¹: Վարքագրական գրականության հետ չափազանց մեծ աղերսների ու ընդհանրությունների պատճառով Ֆ. Կոնիբերը, ի մի բերելով Բրիտանական թանգարանի հայերեն ձեռագրերը, պարականոն ու վարքագրական աշխատությունները ներկայացրել է կողք կողքի²: Առաքյալների պարականոն վկայաբանություններին կարելի է ավելացնել նաև «Պատմութիւն վասն Յովհաննոս ծննդեան և սննդեան և մկրտութեան» և «Պատմութիւն և սքանչելագործութիւն Մարիամու Մագդաղենացոյն»³ գրվածքները:

- Գրվածքներ, որոնք թեև ստեղծվել են սուրբգրային կերպարների շուրջ, այնուամենայնիվ դրանք պատկանում են ուշմիջնադարյան ստեղծագործությունների շարքին: Այդպիսին է, օրինակ՝ «Պատմութիւն Յուդայի Սկարիովտացոյ»⁴ երկը, որի գլխավոր դերակատարը թեև նորկտակարանային կերպարներից է, սակայն այս հորինվածքը գրվել է Էդիպ (հուն․՝ Οἰδίπους, լատ․՝ Oedipus) թագավորի մասին հունական առասպելի հիման վրա⁵:

Իր կազմած ցանկի վերջում Հ. Անասյանն ավելացնում է նաև «Կանոնք եւ սահմանք գոր եդին աշակերտք Քրիստոսի, յետ վերանելոյ Տեառն, ժողովեալք ի վերնատունն», «Սահմանք եւ կանոնք առաքելոց ի ձեռն Կղեմայ, առաքեալ հեթանոսաց», «Կանոնք յետ առաքելոց հարանց հետեւողաց», «Կանոնք Փիլիպպոսի առաքելոյն» և «Սահմանք կանոնաց սրբոյն Թադէոսի ի քաղաքն Ուռհայի ի լուսաւորելն զնոսա» երկերը՝ դասելով դրանք նորկտակարանային պարականոնների շարքին: Այս գրությունները թեև վերագրվում են առաքյալներին, այնուամենայնիվ առնչվում են ոչ թե պարականոն գրականությանը, այլ եկեղեցական իրավունքին⁶:

Այսպիսով, ելնելով վերոշարադրյալից, հանգում ենք այն եզրակացության, որ հայերենով պահպանված պարականոն բազմաթիվ ու բազմաբնույթ գրվածքները միննույն ձևաչափի մեջ չեն ամփոփվում և միմյանցից տարանջատվում են ոչ միայն ըստ ժանրերի, այլև ըստ կիրառական նշանակության և ըստ Աստվածաշնչի գրքերի ու միմյանց հետ ունեցած փոխառնչություն-

¹ Տե՛ս **Calzolari V.**, The Editing of Christian Apocrypha in Armenian: Should we turn a new leaf?, p. 269, *նույնի՝* Un projet de répertoire des manuscrits arméniens contenant les textes apocryphes chrétiens // “Apocryphes arméniens, transmission, traduction, création iconographie”, p. 54:

² A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, “Hagiologies and Apocrypha”, by F. Conybeare, London, 1913, p. 206-230.

³ Ըստ Մ. Էմինի ցանկի (տե՛ս **Эмин Н. О.**, նշվ. աշխ., էջ 339-344):

⁴ Ըստ Հ. Անասյանի ցանկի (տե՛ս **Անասյան Հ.**, նշվ. աշխ., էջ 906):

⁵ Հուդա Բսկարովտացու կյանքի հունական ու լատինական ավանդությունների մասին տե՛ս **Baum P. F.**, The Mediaeval Legend of Judas Iscariot // “Journal of the Modern Language Association of America”, vol. 31, № 3 1916, p. 481-632:

⁶ Տե՛ս **Հակոբյան Վ.**, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, Երևան, 1964, էջ 18-113, *նույնի՝* Կանոնագիրք Հայոց, հ. Բ, Երևան, 1971, էջ 19-45:

ների: Ուստի, ելնելով պարականոնների տարասեռ բնույթից, դրանք առանձնացվում են ըստ հետևյալ խմբերի՝ ա) պարականոններ, որոնք հավակնել են դառնալ Աստվածաշնչի կանոնի մաս՝ հայերեն ձեռագրերում շատ հաճախ ընդօրինակվելով Աստվածաշնչի գրքերի հետ միասին, բ) պարականոններ, որոնք ընդգրկվել են միջնադարում կազմված «սուտ», «հերձվածողական» կամ «ծածուկ» երկերի ցանկերում, գ) պարականոններ, որոնք միջանկյալ տեղ են զբաղեցնում սուրբգրային և եկեղեցական ավանդությունների միջև, դ) պարականոններ, որոնք ունեն ազգային պատմագիտական արժեք, ե) պարականոններ, որոնք վերագրվում են վարքագրական ժանրին, է) պարականոններ, որոնք ստեղծվել են սուրբգրային կերպարների շուրջ, սակայն դրանց հիմքում ընկած են նախաքրիստոնեական առասպելներ:

Мари Мамян – К вопросу о классификации апокрифов

В данной статье речь идет о названии не вошедших в канон Библии христианских произведений, посвященных событиям и лицам Священного Писания. В мировой литературе такого рода сочинения, известные под общим названием *апокрифы* (от греческого слова *ἀπόκρυφος* – тайный, скрытый, сокровенный), в армянской письменной традиции именуются несколько иначе. В армянской среде к этим произведениям применимо другое греческое слово – *παρα; κανών* – вне канона, ставшее синонимом термина апокриф. Рассматривая различные обсуждения по определению апокрифов и принимая во внимание общепринятые версии, тем не менее, в данной работе мы подчеркиваем тот факт, что дошедшая до нас богатая армянская апокрифическая литература, по сути, не является равномерным и однородным собранием сочинений. Переведенные, перефразированные, преобразованные и, наконец, созданные армянскими авторами апокрифические писания отличаются друг от друга не только жанрами: евангелия, акты, послания и откровения. Они также имеют и другие особенности, проявляющиеся как во взаимосвязи с книгами Библии, так и во взаимодействии друг с другом.

Mari Mamyan – On the Classification of the Apocrypha

This article deals with the name of Christian compositions not included in the canon of the Bible, dedicated to events and people of the Holy Scriptures. In the world literature such types of works are known under the general term *apocrypha* (from the Greek word *ἀπόκρυφος* – hidden, secret), whereas in the Armenian written tradition the term *apocrypha* was never used. In the Armenian milieu these works are called somewhat differently: here they are characterized by another Greek word – *παρα; κανών* – outside the canon, which later became synonymous with the term *apocrypha*. Considering also various discussions about the definition of apocrypha and taking into account generally accepted versions, nevertheless, this article emphasizes the fact that the rich Armenian apocryphal literature that has come down to us is not a uniform and homogeneous collection of works. Apocryphal writings, translated, paraphrased, transformed and finally created by Armenian authors, differ from each other not only in genres – gospels, actions, messages and revelations, but they also have other features manifested both in relation to the book of the Bible and in interactions with each other.